ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՏՀՀ-ՏԵԽՀՄԱ-ԾՁԲ-2025/3-2

ք. Երևան «14» 05 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կնքել **«ՀՀ Սյունիքի մարզի Տաթև բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման», «ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման», «ՀՀ Սյունիքի մարզի Ակներ գյուղի կրթահամալիրի կառուցման», «ՀՀ Լոռու մարզի Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման», «ՀՀ Լոռու մարզի Աքորի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների ընթացքում Տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **19 000 000 (տասնինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Որակի տեխնիկական հսկողության ծառայությունների դիմաց ընթացիկ վճարումները կատարվում են Կատարողին տրված վերջին վճարումից հետո շինարարի կողմից ներկայացված և Կատարողի կողմից ստորագրված կատարողական հաշվետվության արժեքին համամասնորեն:

Կատարողին ենթակա է վճարման շինարարի կողմից ներկայացված կատարողականի և պայմանագրի ընդհանուր արժեքի նկատմամբ ստացված տոկոսային չափը: Տոկոսային չափը տարածվում է նույն օբյեկտի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման համար նախատեսված գումարի վրա՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 1869-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» մասով սահմանված հաշվարկի ձևը:

Վճարման ենթակա գումարի չափը սույն պայմանագրի արժեքից ավելին լինելու դեպքում՝ ավելացված մասը վճարման ենթակա չէ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի

հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2, 5.3 և 5.5.1 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

N	Խախտում	Պատասխանատվություն
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Նախահաշվային գնի 1.0 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 1.0 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 1.0 % չափով

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	***ԿԱՏԱՐՈՂ***
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝00846441	Հասցեն՝ՀՀ, Սյունիքի մարզ Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 ՀՎՀՀ՝ 09809552
Հաշիվ՝ 900011052272 Հաշիվ՝ 900011054351 Հաշիվ՝ 900011054393 Հաշիվ՝ 900011051498 Հաշիվ՝ 900011051522 Կենտրոնական գանձապետարան	Հ/Հ՝1150002922490100 Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան	Տնօրեն՝ Արման Առաքելյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 14 » « 05 » 2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՏԵԽՀՄԱ-ԾՁԲ-2025/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Տաթև բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	3000000	1	ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև բնակավայր	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ս/թ հունիսի 30-ը
2	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	3000000	1	ՀՀ Սյունիքի մարզ, Վերիշեն	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ս/թ հունիսի 30-ը
3	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Ակներ գյուղի կրթահամալիրի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	6000000	1	ՀՀ Սյունիքի մարզ, Ակներ	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ս/թ հունիսի 30-ը
4	71351540	«ՀՀ Լոռու մարզի Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	4000000	1	ՀՀ Լոռու մարզ, Օձուն	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ս/թ հունիսի 30-ը
5	71351540	«ՀՀ Լոռու մարզի Աքորի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	3000000	1	ՀՀ Լոռու մարզ, Աքորի	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ս/թ հունիսի 30-ը
Ֆինանսավորման աղբյուր		ՀՀ պետական բյուջե					

Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Աշխատանքի տեսակը	Ըստ ծավալաթերթի, որը կցվում է
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն՝ 1. Շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացվում է սկսած ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկի օրից մինչև ավարտված ծրագրի ընդունման ակտի վավերացումը: 2. Իրականացվում է շինարարական աշխատանքների ամենօրյա հսկողություն, որը հաստատվում է տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարման միջոցով: 3. Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, չափագրումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, շինարարական նորմերին և կանոններին: 4. Խորհրդատուն ապահովում է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների, իրերի որակը, ինչպես նաև աշխատանքների կատարման տեխնոլոգիական պահանջներն, ներառյալ բնապահպանական և սոցիալական պահանջները ըստ գործող նորմերի և պետական ստանդարտների: Բոլոր հարդարման նյութերը, դռները, պատուհանները և սարքավորումները նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ: Խորհրդատուի աշխատանքների շրջանակները հետևյալն են՝ 5. Մասնակցել շենքերի և շինությունների առանցքների նշահարմանը, շինարարության ընթացքում կատարել նիշերի գեոդեզիական ստուգիչ չափագրումներ և կազմել այդ չափագրումների վերաբերյալ համապատասխան ակտեր: 6. Ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին: 7. Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների վերաբերյալ փաստաթղթերի առկայությունը, այդ փաստաթղթերում բերված տեխնիկական տվյալների համապատասխանությունը նախագծով, նորմերով կամ համապատասխան տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջներին: 8. Տեխնիկական հսկողության մատյանում նշել նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները, 9. Մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը, 10. Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին: 11. Ստորագրել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունման ակտը և նրանց հանձնումը Պատվիրատուին: 12. Հետևել, որ կապալառուի կողմից իրականացվող շինարարական աշխատանքները համապատասխանեն անվտանգության նորմերին ու կանոններին: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը 13. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր: 14. Վարել շինարարության ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը: 15. Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար: 16. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը: 17. Նշված ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները: 18. Պատվիրատուին ներկայացնել ամսեկան հաշվետվություն, ներառյալ բնապահպանական և սոցիալական հարցերի մասին հաշվետվությունը: 19. Շենքերի և կառույցների կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների,

	ինչպես նաև ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին: 20. Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Ծառայության մատուցման հատուկ պահանջներ (տեխնիկական բնութագիր)	1. **1.Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատուն- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով:** – **Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:** – **Նշված փորձարկումները պետք է ապահովեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա բոլոր աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը: Ընդ որում, դրանք պետք է պարտադիր ներառեն՝** – հողային աշխատանքների (հիմնատակի գրունտի ֆիզիկամեխանիկական և հետլիցքի գրունտի սեղմման ամրության որոշմամբ) լաբորատոր հետազոտությունները, – ե/բ կոնստրուկցիաների դեպքում ամրանների գործիքային ստուգման (ձգում, ծռում) և բետոնների ամրության ամբողջական լաբորատոր պայմաններում քայքայող եղանակով (սեղմման ամրություն) ստուգման (անհրաժեշտության դեպքում՝ ցածր նախնական արդյունքի պարագայում հորատման միջոցով՝ կեռի վերցնման և ստուգման, ինչպես նաև չքայքայող եղանակով) լաբորատոր համալիր և ամբողջական հետազոտությունները – Մետաղական պատրաստվածքների լաբորատոր հետազոտության, դրանց անձնագրերի կազմման, բոլոր եռակցվող կարանների գործիքային հետազոտությունները, – Բետոնե և ե/բ պատրաստվածքների լաբորատոր հետազոտություններ /եզրաքարեր, բետոնե բլոկներ, դիտահորեր և այլ պատրաստվածքներ/ – Բոլոր տեսակ ջերմամեկուսիչ նյութերի լաբորատոր հետազոտություններ /գոլորշաթափանցելիություն, ջերմահաղորդականության և տեսակարար կշիռների որոշում/ – Էլեկտրական մալուխների և հաղորդալարերի լաբորատոր հետազոտություններ տեղադրվող բոլոր տեսակ նյութերի համար – Բոլոր նմուշառումները պետք է կատարվեն տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից՝ օբյեկտում ապահովելով անհրաժեշտ քանակությամբ նմուշառման ատրիբուտների առկայությունը, տվյալ շինարարական աշխատանքների կատարմանը զուգահեռ, – Բետոնե նմուշների պահպանությունը շինարարական օբյեկտում նորմատիվային պահանջներին համապատասխան ևս պետք է իրականացվի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից: – Բոլոր տեսակ լաբորատոր հետազոտությունները պետք է իրականացվեն նորմատիվային պահանջներին և ստանդարտներին համապատասխան անհրաժեշտ ամբողջ քանակությամբ, անկախ ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ներկայացված լաբորատոր փորձարկումների պլանի: 2. Խորհրդատուն պետք է ունենա առնվազն մեկ բնապահպանական և սոցիալական հարցերի մասնագետ, որը շինարարության ամբողջ ընթացքում պետք է հետևի շինարարության կամակերպման նախագծով նախատեսված շինարարական հրապարակի կազմակերպմանը և դրա շարունակական պահպանությանը, ինչպես նաև շինարարական հրապարակի տեխնիկական անվտանգության ու սանիտարական նորմերի ամբողջապես և անընդհատ պահպանմանը՝ հակառակ պարագայում Պատվիրատուի կողից արձանագրված յուրաքանչյուր խախտման դեպքում կկիրառվեն պայմանագրով նախատեսված տույժեր և տուգանքներ: Խորհրդատուն պետք է ապահովի, որպեսզի Պատվիրատուն իրազեկված լինի շինարարության ընթացքում ցանկացած չնախատեսված հողօգտագործման մասին:
Հաշվետվության ներկայացման պահանջներ	1. Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ընթացիկ և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: 2. Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են շինարարական աշխատանքների

	յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, կատարողական ակտը ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): 3. Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում, որը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)

*__Լիցենզիա և լիցենզիայի ներդիր__

Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ լիցենզիան և ներդիրները

ԼԻՑԵՆԶԻԱ («Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք)
Շինարարության որակի տեխնիկական հսկողություն
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ («ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 06-ի N 15-Ն հրաման») *(լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*
• **1-ին դասի լիցենզիա,** ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ **1-ին կարգի ներդիր, հավաստագիր,** ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատա-կարարման, էլեկտրալուսա-վորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատա-կարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) **1-ին կարգի ներդիր, հավաստագիր,** ✓ ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) **1-ին կարգի ներդիր, հավաստագիր,** ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) **1-ին կարգի ներդիր, հավաստագիր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441

Հաշիվ 1 Հ/Հ՝ 900011052272
Հաշիվ 2 Հ/Հ՝ 900011054351
Հաշիվ 3 Հ/Հ՝ 900011054393
Հաշիվ 4 Հ/Հ՝ 900011051498
Հաշիվ 5 Հ/Հ՝ 900011051522
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

Հասցեն՝ՀՀ, Սյունիքի մարզ
Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
ՀՎՀՀ՝ 09809552

Հ/Հ՝1150002922490100
Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն
Արման Սեմաքեյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 14 » « 05 » 2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՏԵԽՀՄԱ-ԾՁԲ-2025/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Տաթև բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	0	0	0	0	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000
2	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	0	0	0	0	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000
3	71351540	«ՀՀ Սյունիքի մարզի Ակներ գյուղի կրթահամալիրի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	0	0	0	0	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000	6000000
4	71351540	«ՀՀ Լոռու մարզի Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	0	0	0	0	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000

5	71351540	«ՀՀ Լոռու մարզի Աքորի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	0	0	0	0	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000	3000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
***Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441

Հաշիվ 1 Հ/Հ՝ 900011052272
Հաշիվ 2 Հ/Հ՝ 900011054351
Հաշիվ 3 Հ/Հ՝ 900011054393
Հաշիվ 4 Հ/Հ՝ 900011051498
Հաշիվ 5 Հ/Հ՝ 900011051522
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

Հասցեն՝ՀՀ, Սյունիքի մարզ
Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
ՀՎՀՀ՝ 09809552

Հ/Հ՝1150002922490100
Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝
Արման Առաքելյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« 14 » « 05 » 2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՏԵԽՀՄԱ-ԾՁԲ-2025/3-2 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 14 » « 05 » 2025թ. կնքված
ՀՏՀՀ-ՏԵԽՀՄԱ-ԾՁԲ-2025/3-2 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն